№ 19 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 16 **1891** ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 16 № 19

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ 1891 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեկը կը ստանակը սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը՝ 9 ռուբլի, վեց ամսվանը՝ 6 ռուբլի.

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լաքիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յունվարի 15-ին Հին-Նախիջևանում վախճանված ՀԱՅՐԱՊԵՏ ԶԱՔԱՐԵԱՆՑԻ ընկերները խնդրում են նրա բարեկամներին և ծանօթներին շնորհ բերել հանդուցեալի հոգեհանգստին, որը կատարվելու է ամսիս 17-ին, կիրակի օր, առաւօտեան ժամը 11-ին ԹԻՖԼԻՍԻ Քամշյեանց եկեղեցում: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներսիսեան դպրոցի ուսումնական և տնտեսական դրութիւնը. Ռուսաց թատրոն. Նամակ Օդէսայից. Նամակ Փոթիից. Նամակ Բաքուից. Նամակ Խմբագրին. Նեղքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Շօվինիստական ցոյցեր. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Հինգշաբթի, փետրվարի 14-ին, Ներսէս հինգերորդ կաթողիկոսի մահուան տարեդարձի օրը հոգեհանգիստ կատարվեց Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում, որից յետոյ Ներսիսեան դպրոցում հանդէս կատարվեց բաւական մեծ բազմութեան ներկայութեամբ:

Հերթակալ հոգաբարձու պ. Յ. Տէր-Յովհաննիսեան և դպրոցի տեսուչ պ. Սպենդիարեան կարդացին համառօտ հաշիւ դպրոցի թէ նիւթական և թէ ուսումնական մասերի վերաբերմամբ: Ինչպէս յայտնի է, Ներսիսեան դպրոցը մեծ մասամբ կառավարվում է կալուածների արդիւնքով: Նա այժմ ունի զանազան անձերից նուիրած, կամ հոգաբարձութեան միջոցով ձեռք բերած 13 կալուածներ, որոնցից անցեալ 1890 թվին մուտք եղել է 29,171 ռուբլի: Թիֆլիսի թեմի մոմավաճառութիւնից, որի արդիւնքը Ներսէս կաթողիկոսը յատկացրել է իր հիմնած դպրոցին, մուտք է եղել 9,516 ռ.: Թիֆլիսի մօտ գտնվող զանազան ուխտատեղիներից, որոնց արդիւնքը նոյնպէս յատկացրած է Ներսիսեան դպրոցին, մուտք է եղել 5,584 ռ.: Անցեալ 1889 թվին մնացորդ է եղել 15,168 ռ. զանազան մուտք է եղել 524 ռ. ընդամենը 59,965 ռ.: Ծախս. որդեգիրների սննդեան և տարին ծառայողներին 2,861 ռ., ճանապարհածախս մի քանի որդեգիրների և երթեւեկների՝ 250 ռ., լուսաւորութեան՝ 599 ռուբլի, հանդերձեղէնի՝ 1,317 ռուբլի, վառելափայտի 565 ռուբլի, դեղորայք 69 ռ., դասական պիտոյք 183 ռուբլի, դասական գրեանք 465 ռ., կահ-կարասիք 213 ռ., դիւանական պիտոյք 42 ռ., լրագրի և ամսագրի համար 17 ռ., ընթերցանելի գրքեր և թանգարանի համար իրեղէններ 5,270 ռ., կալուածների նորոգութիւն, կրակի դէմ ապահովութիւն, քաղաքային հարկեր և այլն 2,655 ռ., բարերարների հոգեհանգիստ 559 ռ., ռոճիկ տեսչին, ուսուցիչներին և ուրիշ ծառայողներին 25,719 ռ., թոշակագրամ 161 ռ., ուխտատեղիների վրա արած ծախս 2,524 ռ., յանուն դպրոցի նոր շինութեան գումարի շինուցումն 7,233 ռ., օժանդակութիւն չքաւոր երթեւեկ աշակերտներին 125 ռ. և ուրիշ մանր ծախսեր 225 ռ.: Ընդամենը 46,197 ռ.: Այդպիսով առ 1-ն յունվարի 1891 թ. մնացորդ է գոյացել 13,768 ռուբլի:

Բացի դրանից, դպրոցն ունի բարերարների կտակներով և նուիրատուութեամբ ձեռք բերած գումարներ, որոնցով գնված են տոկոսաբեր տոմսեր և պահպանվում են արքունական բանկի Թիֆլիսի բաժնում. այդ արժեթղթերի ընդհանուր գումարը հասնում է 101,128 ռ.: Միայն յայտնի չէ, թէ ինչ պատճառներով հոգաբարձութիւնն այդ գումարից ստացած տոկոսը չէ մտցրել հաշուի մէջ. կարդացած հաշուի մէջ ակնարկ անգամ չը կայ նրա մասին: Հարիւր հազար ռուբլին քիչ գումար չէ, որ նրա տոկոսների մասին կարելի լինէր լռել: Երևի հոգաբարձութիւնն այդ բանը կը պարզի լրագրութեան միջոցով:

Դպրոցն ունի և 21,935 ռ. դրամագլուխ դպրոցի նոր կառուցանելի շինութեան համար:

Ներսիսեան դպրոցն այժմս ունի 6 հիմնական դասարաններ, 5 զուգընթաց և մէկ պատրաստական. ընթացիկ տարվայ սկզբին աշակերտների թիւը 349 էր, դրանցից 324 երթեւեկ և 25 որդեգիր: Դրանցից բարձր դասարաններում կան՝ չորրորդ դասատնում 24, հինգերորդում 30, և վեցերորդում 14. սրանցից նոր ընդունվածների թիւը հասնում է 85-ի: Ուսումնական տարվայ սկզբից մինչև ընթացիկ փետրվար ամիսը 30 աշակերտներ զանազան պատճառներով դուրս են եկել ուսումնարանից, այնպէս որ դպրոցում սովորողների թիւը այժմս հասնում է 319 աշակերտների, որոնցից 45 հոգևորականների որդիք են, 5 ազնուականների, 148 վաճառականների և մանրավաճառների, 85 արհեստաւորների և 38 ուրիշ զանազան գործերով պարապողների: Թիֆլիսի նահանգից 235 են, Գանձակի նահանգից 25, Քութայիսից 32, Երևանից 32, Ղարսից 3, Թերեքեան շրջանից 4, Դաղստանից 1, Ցաղկաստանից 6, Պարսկաստանից 9 և Ղրիմից 1:

Ուսուցչական խմբի մէջ փոփոխութիւններ եղած չեն: Նոր հրաւիրված են հայկաբանութեան և ընդհանուր պատմութեան ուսուցիչներ և մի վերակացու: Ուսուցչական խումբը բաղկացած է 23 ուսուցիչներից, որոնց մեծ մասը բարձրագոյն կրթութիւն են ստացած և 4 հոգի վերակացուներից: Աշակերտների առաջադիմութիւնն ուսման մէջ աւելի նկատելի է միջին և բարձր դասարաններում, իսկ առաջիններում առաջադէմների տոկոսը համեմատաբար նուազ է: Անցեալ տարվայ մայիսեան հարցաքննութիւններից երեւաց, որ բոլոր դասարանների առաջադիմութեան միջին տոկոսը հասնում էր 65-ի: Անցեալ տարի վեցերորդ դասարանից աւարտել են 21 աշակերտ, որոնցից երկուսը շարունակում են իրանց ուսումը Էջմիածնի ճեմարանում, երկուսը պատրաստվում են Մոսկվայում մասնագիտական բարձր ուսումնարան մտնելու, իսկ 18-ը ուսուցչական պաշտօն են վարում Վրաստանի, Երևանի և Շամախու թեմերի ուսումնարաններում:

Դպրոցն ունի գրադարան, որը բաղկացած է երեք մասերից. 1) ընթերցանելի գրքերից, որոնց թիւը հասնում է 1334-ի. դրանցից օգտվում են դպրոցի ուսուցիչները և աշակերտները. ընթացիկ ուսումնական տարվայ մէջ աշակերտներից 182 հոգի ստացել են կարդալու 920 գիրք: Աշակերտների կարդացող մասը եղել են միջին և բարձր դասատան տղաները, իսկ փոքր դասարանները մանկական գրքերի պակասութեան պատճառով գրեթէ զրկված են ընթերցանութիւնից. 2) 1688 դասագրքերից, որ ստանում են միայն որդեգիրները և չքաւոր աշակերտները և 3) 8872 օրինակ վաճառելի գրքերից, որոնք մնացել են այն ժամանակներից, երբ դպրոցը սեփական տպարան ունէր: Ենթադրութիւն կայ այս տարի գրադարանի պակասութիւնները լրացնել: Հասարակութիւնը բաւական հետաքրքրութեամբ լսում էր հաշիւները և պ. տեսչի բացատրութիւնները դպրոցի ընդհանուր դրութեան վերաբերութեամբ: Լաւ կը լինէր, եթէ հաշիւները տպագրվէին և այդպիսով աւելի միջոց տային հասարակութեան ծանօթանալ դպրոցի գործերի էութեան հետ:

ՌՈՒՍԱՑ ԹԱՏՐՈՆ

—

Յունվարի 13-ին ռուսաց դերասանական խումբը, դերասան Կաշիրինի բենեֆիսին, բանկի թատրոնում, ներկայացրեց Ավերկիևի «Տրօգիրեան զօրապետ» դրամն: Պիէսան մի քանի պակասութիւններով հանդերձ, դարձեալ վերին աստիճանի բեմական և ազդու է: Բօդիսլավը, պիէսայի հերոսը, թշնամութիւն ունի մի ուրիշի հետ, և հայրենի երկրի սովորութեան համեմատ, նա ուրիշ բան չէ ուզում, բայց եթէ վրէժխնդիր լինել և մինչև վերջը հալածել հակառակորդին: Այդ հակառակորդն էլ թարսի պէս սիրահարված է Բօդիսլավի միակ աղջկայ վրա: Աղջիկը իր կողմից ևս սիրում է նրան: Հայրը անչափ սիրում է աղջկան: Եւ այդպիսով հոր մէջ կռուում են երկու կատաղի զգացմունքներ. մի կողմից նա չէ ուզում աղջկան տալ իրան ատելի մարդուն, իսկ միւս կողմից աղջկան սիրած մարդուն չը տալով, պատճառ է դառնում նրա դժբաղդութեան և թշուառութեան: Իսկ այդ թշուառութիւնը շատ մեծ է, որովհետև աղջկան սիրած մարդուց զրկել, կը նշանակէ նրան մահ պատճառել: Բօդիսլավը այդ պարզ տեսնում է: Մի առ ժամանակ հայրական սէրը յաղթող է հանդիսանում. հայրը համաձայնվում է, որ աղջիկն ամուսնանայ սիրած մարդու հետ: Բայց այդ երկար չէ տևում.—ատելութեան և վրէժխնդրութեան կայծը վառվում և բորբոքվում է ծերունի, բայց քաջարի զօրապետի սրտում, և նա վճռում է անպատճառ վրէժխնդիր լինել իր այժմեան փեսայից: Եւ ահա նոյն իսկ հարսանիքի օրը, հարսանիքի ամենաուրախ ժամին, հայրը, դարան մտած, հրացանի հարուածով սպանում է փեսային: Հարսանիքի ուրախութիւնները բոլէպտէս փոխվում և թաղման տեսարան են ներկայացնում: Սիրահարված երիտասարդը մեռնելիս աղաչում է իր կնոջից վրէժխնդիր լինել: Եւ ահա այդ օրից նորահարսը, իր հարսանիքի շորերը սև շորերի փոխելով, սուրը կողքին կախած, որոնում է իր սիրածի սպանողին: Երկար ժամանակ որոնում են, բայց չեն գտնում: Այդ բանն այնքան ազդում է վրէժխնդրութեամբ լցված կնոջ սրտի վրա, որ նա տանջվում է, և եթէ էլի մի քանի օր անցնէր ու նա չը գտնէր սպանողին, կը մեռնէր: Հայրը տեսնում է սիրած աղջկայ այդ հոգեկան տանջանքը, և չէ կարողանում երկար թաղցնել. և ահա մի օր յայտնում է որ փեսային սպանողն ինքն է: Աղջիկը վճռում է կատարել իր տուած խոստումը՝ վրէժ առնել: Հայրն ինքն իր ձեռքով տալիս է աղջկան ատրճանակը, որ այդ ատրճանակով սպանի իրան հորը: Աղջիկն առնում է ատրճանակը և նշան դընում ուղիղ հոր կրծքին: Դա մի ազդու տեսարան է: Տրաքում է ատրճանակը, և անսպասելի հետևանք,—հայրը կենդանի է, իսկ աղջիկը գետնին ընկած: Հայրասէր աղջիկը գնտակը փոխանակ հոր վրա ուղղելու, ուղղում է դէպի իր կուրծքը:

Ահա այս է պիէսայի համառօտ միտքը:

Տարաբաղդաբար, խաղը, ընդհանրապէս վերցրած, լաւ չանցաւ: Թոյլ էին խաղում, և ներկայացումը այն տպաւորութիւնը չունեցաւ, ինչ որ պէտք է ունենար այդ ազդու պիէսան, եթէ լաւ խաղացվէր:

Թատրոնը, կարելի է ասել, դատարկ էր:

ՆԱՄԱԿ ՕԴԷՍԱՑԻՑ

—

Փետրվարի 2-ին

Կիեվի համալսարանի նախկին ռէկտօրի, յայտնի պրոֆէսօր Ռէննէնկամպֆի (Ренненкампфъ) որդին այսօր մեր համալսարանի դահլիճում պաշտպանում էր պետական իրաւունքի մագիստրոս գիտնական տիտղոսին արժանանալու համար՝ իրաւաբանական ֆակուլտէտին ներկայացրած՝ իր շարադրութիւնը, «Սահմանադրական սկզբունքներ և իշխան Բիսմարկի քաղաքագիտական հայեացքները» (Конституціонныя начала и политическія воззрѣнія кн. Бисмарка) վերնագրով: Դահլիճն այն աստիճան լի էր, որ ոչ միայն գրեթէ բոլոր ուսանողները, այլ նոյն իսկ դրսից եկածներից շատ շատերը ստիպված եղան ժամը մէկից մինչև $4^1/_2$ կանգնած մնալ:

Գիտնական հանդիսին ներկայ գտնվեցան շատերը և գեղեցիկ սեռից. կային վերջապէս և զինուորականներ և գիմնազիստներ:

Գիտութեան տաճարի մէջ այդ ստուար բազմութեան այդ օրը հաւաքվելու պատճառը, պարզ էր՝ մագիստրանտի ընտրած նիւթը, որպէս մի քննական հայեացք բոլորին յայտնի երկաթէ կանցլերի քաղաքագիտական գործունէութեան վրա՝ շարժել էր ամենի հետաքրքրութիւնը. իրաւաբանական ֆակուլտէտի դէկանը, որը այդ օրը և նախագահում էր վիճաբանութիւններին, դիսերտանտի կարճառօտ «curriculum vitae» կենսագրական տեղեկութիւնները կարդալուց յետոյ, հրաւիրեց նրան բարձրանալ ամբիոն, պաշտպանելու իր գրածը:

Կանաչ սեղանի չորս կողմը բոլորել էր գիտնականների կաճառը. ներկայ էր և մագիստրանտի ծերունի հայրը, կային պրոֆէսօրներ և լեզուագիտական բաժնից, որոնց մէջ էր և Մօդէստօվ: Պաշտօնական դիմադրողներ (оппонентъ) նշանակվել էին պրոֆէսօրներ Սոկոլսկիյ և Իվանովսկիյ:

Նախ և առաջ Ռէննէնկամպֆ, ինչպէս և ընդունված է միշտ այս տեսակ դէպքերում, կարճառօտ կերպով կարդաց իր շարադրութեան բովանդակութիւնը. նա չեշտեց գլխաւորապէս այն կէտի վրա, թէ ինչ անգին դեր է խաղացել

Բիսմարկ իր քաղաքագիտական գործունէութեամբ. «թէպէտ նա պաշտօնապէս իջաւ ասպարէզից, սակայն կասկածում ենք, որ դրանով վերջանայ նրա ազդեցութիւնը քաղաքագիտական աշխարհի վրա»:

Մագիստրանտի լեզուն ճոխ է և սահուն, ինքը վէճի մէջ չափազանց ճարպիկ և իրան լաւ պահող: Այդ նախագիծը կարդացվելուց յետոյ, սկսվեց պաշտօնական դիմախօսների և մագիստրանտի մէջ գիտական պայքարը:

Մի քանի ոչ այնքան ծանրակշիռ նկատողութիւններ անելուց և Բէննէնկամպֆի կողմից միանգամայն յարմար պատասխաններ ստանալուց յետոյ, պրոֆէսօր Սոկոլսկիյ արաւ իր եզրակացութիւնը այն տրամադրութեամբ, որ մագիստրանտը «հետաքրքիր նիւթի հետ, ամփոփելով նրան գրաւիչ լեզուի մէջ, վարվել է բարեխղճաբար»:

Պրոֆէսօր Իվանովսկիյ արեց մի շարք շատ իրաւացի նկատողութիւններ, գլխաւորապէս շարադրութեան երկրորդ մասի վերաբերմամբ, տեղ-տեղ մագիստրանտին նեղը գցելով, տեղ-տեղ էլ ինքը համաձայնվեց նրա հետ և ի վերջոյ մի երկար, բայց գեղեցիկ եզրակացութեան մէջ, նկատելով դիսէրտացիայի խոշոր պակասութիւնները, ընդունեց միանգամայն և նրա արժանաւորութիւնը. «դուք չտապել էք նիւթի ընտրութեան մէջ. Բիսմարկի գործունէութեան, ինչպէս և ամեն գործիչի մասին, քննադատական հայեացքները աւելի անաչառ կը լինէին նրա մահից յետոյ, երբ երկու կողմից կանգորրանային կրքերը, բայց և այնպէս ձեր չարադրութիւնը թէպէտ դուրկ է առանձին նորութիւնից, բովանդակում է իր մէջ հետաքրքիր մի նիւթ. օգտվելով այս և այն աղբիւրներից, դուք եղել էք ինքնուրոյն»:

Բուռն ծափահարութիւնները մագիստրանտի ազգականաց հետ միասին դղրդեցրին դահլիճը: Սրանից յետոյ եղան մասնաւոր դիմախօսութիւններ. չէ կարելի այստեղ լռութեամբ անցնել յայտնի պրոֆէսօր և հրապարակագիր Մօդէստովի խօսքերը:

«Վիճելի շատ կէտեր կան ձեր աշխատութեան մէջ, ասեց նա, բայց ժամանակի սղութեան պատճառով ես չառանում եմ միմիայն մի նկատողութեամբ. ձեր չարադրութեան վերջին երեսում ասում էք, որ Բիսմարկի կարծիքը դարձել է անգամ գիտութեան սեփականութիւն. դա առնուազը չափազանցութիւն է». դիսէրտանտը յայտնեց, որ ինքը զրելով այդ կտորը, ի նկատի է ունեցել Լաբանտին (Лабантъ), որը Բիսմարկի կարծիքը սուվերենիտէտի (суверенитетъ) մասին բերում է իբրև գիտական որոշումն, նաև կանցլերի մի ուրիշ կարծիքով օգտվել է Տրէյչկէ (Трейчке). բայց նա համաձայնեց, որ այդ կտորը թերևս չափազանցրած լինի:

Ուսանող Պանաիոդ (Панаіодъ) վերջ տուեց պայքարին իր թէև ոչ այնքան խելացի, բայց սրամիտ նկատողութեամբ, որը մեծ զուարճութիւն պատճառեց մինչև այն ժամանակ լուռ և մունջ նստած հասարակութեանը:

Նա նկատեց, որ դիսէրտանտի չարադրութիւնը յիրաւի մեծ ընդունելութիւն գտաւ հասարակութեան մէջ, բայց նա չէ կարող անուանվել խիստ գիտական, մինչդեռ մագիստրանտին գրելու ժամանակ ուղեցոյց են եղել Բէյխստագում արտասանած Բիսմարկի բաղմաթիւ ճառերը, որտեղ այդ «քաղաքագիտաց քաղաքագէտը» խօսում էր այնպէս, որ նրան չը հասկանան:

Երրորդ անգամ լսվեցան ծափահարութիւնները. նորընծայ մագիստրոսն իջաւ ամբիոնից, ստացաւ շնորհաւորութիւններ ներկայ գտնվող պրոֆէսօրներից, իսկ ուսանողների ծափահարութիւնները հետևեցին նրան մինչև ուսուցչապետական սենեակ մտնելը: Բէննէնկամպֆի գիրքն արժէ կարդալ:

Ե. Վ.

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

Փետրվարի 3-ին

Մեր ընթերցող հասարակութեան շատ փոքր մասը տեղեկութիւն ունի այս քաղաքի մասին. պատճառը դիւրին է երևակայել—այստեղից մամուլի մէջ թղթակցութիւններ շատ սակաւ են պատահում, և եղածն էլ միակողմանի—միայն աղգային տեսակէտից, մինչդեռ թէ անցեալով և թէ ապագայում կովկասեան երկիրների համար առաջին նաւահանգստի տեղը լինելով, Փօթին կարող է կռուածաղիկ դառնալ Բաթումի և Սուխումի նաւահանգիստների կողմնակիցների մէջ: Առ այժմ այս հարցը և ուրիշ խնդիրները թողնելով ապագայի թղթակցութիւններիս համար, սրանով մի ուրիշ հասարակական հարց պիտի չօշափեմ, որը Փօթիի հասարակութեան առօրեայ խնդիրներից մէկն է:

Ներկայ յունվարի 10 և 15-ին նշանակված էր մեր քաղաքի ձայնաւորների ընտրութիւններն ապագայ 1891—94 քառամեակի համար երկու կարգի. 10-ին ընտրվեցան Ա. կարգի ձայնաւորները՝ 15 մարդ և 15 ու 16-ին ընտրվեցան Բ. կարգի ձայնաւորները՝ 15 մարդ. ներկայ ամսի 1-ին ես նշանակված էր նոր քաղաքագլխի ընտրութիւնը:

Հասարակութիւնը խիստ լարված դրութեան մէջ էր մինչև այդ օրը. մեծամասնութիւնը 1883—86 թուականի մեր քաղաքագլուխ գեներալ Վահրամովի կողմն էր, որովհետև ներկայ քաղաքագլուխ իշխան Թավադերիձէի հիւանդութեան և թուլութեան պատճառով (թէև անշահասէր մարդ) քաղաքային գործերի դրութիւնը վատացել էր, և Վահրամովի կողմնակիցները մի այնպիսի գործունեայ մարդ էին ուզում ընտրել, որ հին ցաւերը դարմանէ և քաղաքը ոտի վրա կանգնեցնէ: Ազգականութեան մի մասն էլ ուզում էր քաղաքագլուխ ընտրել Քութայիսի ադնուականների բանկի նախկին նախագահ իշխան Դադիանիին: Սրա թեկնածութեան մասին զանազան տեսակ են խօսում հասարակութեան մէջ: Իշխանը քաղաքի կարիքների հետ լաւ ծանօթութիւն չունի, և այս տարի միայն տեղս կալուածք գնեց, որպէս զի քաղաքային ընտրութիւններին ձայն ունենայ:

Ազգականութեան և մի փոքրամասնութիւնը Մէռնարդիին ուզում էր տեսնել քաղաքագլխի պաշտօնի մէջ: Այս անձնաւորութիւնը ձեզ ծանօթ լինելու է: Սա ես իշխան Դադիանիի նման այս տարի միայն կալուածք գնեց տեղս և 2 ռուբլի քաղաքային տուրք վճարելով, կամենում էր այսպիսի մի պաշտօնի հասնել:

Ամսիս 1-ին, ժամը 12-ին քաղաքային տան դահլիճում հաւաքվեցան 27 ձայնաւորներ. պակաս էին 3 մարդ. Շէրբին հիւանդ էր. Նիկոլաձէ Թիֆլիս էր և Վահրամով՝ Գօրի: Հանդիսատեսների մեծ բազմութիւն հաւաքված էր. երդմնեցութեան կարգը կատարելուց յետոյ առաջարկվեցան 4 թեկնածուներ քաղաքագլխի, այն է Թավադերիձէ, Վահրամով, Դադիանի և Մէռնարդիա: Թավադերիձէ, նոյն ինքն Դումայի նախագահը, իր չնորհակալութիւնը յայտնեց և հիւանդութիւնը պատճառաբանելով, հրաժարվեց քուէարկութիւնից. մնացեալ 3 թեկնածուները քուէարկվեցան և ընտրվեց քաղաքագլուխ 17 ձայնով ընդդէմ 10-ի գեներալ Վահրամով, որի ընտրութիւնը ծափահարվեց հասարակութեան կողմից:

Սրանով քաղաքային գործերը դեռ չեն վերջացած, և մօտ օրերս կը նշանակվեն ընտրութիւններ՝ քարտուղարի, անդամի և քաղաքագլխի փոխանորդի: Առայժմ թողնելով քարտուղարի և անդամի ընտրութիւնը ուրիշ ժամանակի, ուզում եմ մի քանի խօսք ասել քաղաքագլխի փոխանորդի ընտրութեան մասին, որը մի տեսակէտից ընդհանրութեան խօսակցութեան առիթ է դարձել: Հարցը նրանումն է, որ այսօր ապարէզի վրա 3 ընտրելիներ կան այս պաշտօնի համար. մէկը ռուս, երկրորդը վրացի և երրորդը (եթէ կարելի է ասել) հրէայ-ռուս, այսինքն ժամանակով հրէայ էր, և այժմ ռուսադաւան: Ի նկատի ունենալու է, որ քաղաքային կանոնադրութեան հիման վրա հրէաները իրաւունք չունեն ոչ քաղաքագլուխ ընտրելու, ոչ քաղաքագլխի փոխանորդ և ոչ անդամ: Այժմ ինչպէս պէտք է խնդիրը վճռել. միթէ կրօնքը փոխելով, իր ազգութիւնն էլ փոխեց. եթէ սա ընտրվի քաղաքագլխի փոխանորդի պաշտօնի մէջ և հաստատվի նահանգապետից, ի հարկէ ամեն ինչ կը պարզվի:

Ա.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Փետրվարի 11-ին

Ամսիս 9-ին, ներկայութեամբ 60 անդամների և 10—15 հիւրերի՝ կայացաւ «Մարդասիրական ընկերութեան» ընդհանուր ժողովի երրորդ նիստը:

Ժողովի սկզբին նախագահ Բ. Սահակեանցից կարդաց անդամներից երկուսի՝ Յ. Ադամեանի և Տէր-Մարկոսեանի հրաժարվելու գրաւոր բացատրութիւնները:

Ժողովականները չը բաւականացան պ. Ադամեանի գրաւոր բացատրութիւններով և որոշեցին կրկին խնդրել: Հաւատացած լինելով, որ դժուար պիտի լինի մերժել ամբողջ ժողովի խնդիրքը՝ բոլորեքեան ոտի կանգնելով՝ վճռեցին պատգամաւորներ ուղարկել և յայտնել ժողովի կամքը:

Պատգամաւորների մեկնելուց յետոյ, ժողովը զբաղվեց խորհրդի անդամների ընտրութեամբ. ընտրութիւնը տեղի ունեցաւ տոմսակներով: Ձայների բազմութեամբ ընտրվեցան՝ պ.պ. Ա. Գալստեան, Միք. Արամեանց, Ա. Ծատուրեանց, Գ. Ասլանեանց, Մ. Աբիեանց, Պ. Ղուկասեանց, Ա. Դոլուխանեանց և Հ. Ղուկասեանց: Նրանցից, ձայների բազմութեամբ, առենադպիր ընտրվեց Ա. Գալստեան, իսկ գանձապահ՝ Մ. Աբիեանց: Վերջինս այդ պաշտօնից հրաժարվեց: Բացի մի երկուսից, հրաժարվեցան նոյնպէս և ներկայ եղող միւս անդամները:

Ոչ նախագահի առարկութիւնը և ոչ ժողովի յորդորները չը կարողացան ազդել: Բանն այն տեղը հասաւ, որ մինչև անգամ խոստացան մէկի պատկերը կախ տալու նոր չինվող դպրոցի դահլիճում, եթէ միայն չը հրաժարվի....

Հրաժարվողները շարունակեցին պնդել իրանց հրաժարականների վրա: Ժողովը աղմկալի և հիսթափեցնող կերպարանք ստացաւ: Տեղի ունեցան մի քանի ակնարկներ: Ժողովականներից մէկը մինչև անգամ ցանկութիւն յայտնեց, որ «հին» անդամները բոլորն էլ հրաժարվեն. թող այնուհետև «նոր» այժեր ընտրվեն և նրանք «լաւ» կառավարեն....

Այդ միջոցին հրաժարվող պարոններից ոմանք ինքնահաճ ժպիտ արձակեցին: Ժողովը աւելի ընտանեկան երեկոյթի բնաւորութիւն էր ստացել. ով ինչ ուզում էր՝ ասում էր, ում ինչ հաճելի էր՝ անում էր. ոչ կարգ, ոչ կանոն:

Ինչպէս բանից երևաց, նախկին անդամներից ոմանք հրաժարվում էին ոչ միայն նրա համար, որ իսկապէս միջոց չունեն, չեն կարողանում գործունեայ և օգտակար անդամ լինել, ոչ.—Նրանք հրաժարվում են նրա համար, որ մարդիկ թոյլ են տալիս իրանց նրանց գործունէութեան վրա խօսելու, նրանց արածները քննադատելու: «Առանց մի կօպէկ օգուտ ունենալու ծառայենք, մեր բան ու գործը թողած՝ ժողովներ անենք, նեղութիւններ քաշենք, դեռ մեզ վրա էլ համարձակվեն խօսել»—մտածում են մեր «մարդասէրները», համոզված լինելով, թէ ինչ որ իրանք անեն, պէտք է շնորհակալութեամբ ընդունվի, պէտք է խնկարկվի, որովհետև բարեհաճել են «ձրի» անելու, «ձրի» ծառայելու մարդկանց....

Այսպէս թէ այնպէս՝ ժողովականները իրանց նախագահով հանդերձ շուարվել էին, չէին խմանում ինչ անեն. մի կողմից անդամների ու գանձապահի հրաժարականը, միւս կողմից էլ նախագահի խնդիրքը, որովհետև արդէն պատգամաւորները վերադարձել էին բացասական պատասխանով: Հարցը չը ձգձգելու համար, ժողովը միաձայն դիմեց նախկին գանձապահ պ. Ղուկասեանին, ծափահարութեամբ խնդրելով, որ ստանձնէ նախագահի պաշտօնը: Պարոնը սառնասրտութեամբ այս անգամ էլ մերժեց: Դիմեցին ուրիշներին, նրանք ևս մերժեցին. այդ միջոցին նախագահը ինքնամոռացութեան մէջ ընկաւ և ոչ թէ միայն կարգապահութեան չէր հետևում, այլ և վարվում էր այնպէս, ինչպէս վարվում են կառավարիչները (թամադայ) խնջոյքներում կամ հարսանիքներում:—«Հարսանիք է, ինչ է, որ «ալլահվերդի» էք գնում միմեանց. համաձայնվեցէք, գնայ վերջանայ, ինչ էք երկարացնում, բծախնդրութիւններ անում....», նկատում էր վրդովված նախագահը:

Ի դէպ. ոչ մի տարի այսպէս չէ ձգձգվել ընդհանուր ժողովը և այսքան «անլաղաթ» չէ անցել, ինչպէս այս տարի: Շատերը վերագրում են նախագահի անտակտութեան:

Վերջին անգամ, ձայների բազմութեամբ, նախագահ ընտրվեց պ. Բ. Դոլուխանեանց, որը բացակայ էր: Ժողովը հաւատացած էր, որ պարոնը կը համաձայնվի, բայց թէ պիտի համաձայնվի իսկապէս, թէ ոչ, այդ անորոշ մնաց:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թաթում 11 փետրվարի

Ձեր համակրելի լրագրի № 15-ում հրատարակված էր մի լուր, որպէս թէ ես չեմ ցանկանում յանձնել տեղական եկեղեցուն, նրան պատկանող, բայց իմ անունով առնված մի գետին:

Ամբողջ քաղաքը կարող է վկայել, պ. խմբագիր, որ այդ լուրը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ ամենանանբարեխիղճ զրպարտութիւն: Եկեղեցին, շատով տաս տարին կը լրանայ, որ որպէս լիակատար սեփականատէր, տիրապետում է այդ տեղին: Իմ կողմից յանձնված են եկեղեցուն օրէնքի պահանջած ամեն տեսակ դոկումենտներ, որոնք այդ հողի անպայման եկեղեցուն պատկանելը հաստատում են, և վերջապէս դեռ ես 1884 թուականին ես տուել եմ Էջմիածնի Սինոդին մի ստորագրութիւն, որի նստարով հաստատված պատճէնը պատիւ ունեմ ներկայումս ուղարկելու, և որով հաստատում եմ որ այդ հողը, թէև իմ անունով առնված, պատկանում է եկեղեցուն. այդ թղթին բացի ինձ ստորագրեցին նաև՝ այն ժամանակվայ երեցփոխ Աղզամանով, հոգաբարձուք՝ Խոջամիրեանց և Բարխուդարեանց, և ծխատէր քահանայ Տէր-Ստեփանեանց. ես չեմ հասկանում դրանից աւելի ինչ է ուզում պ. լրատուն, որին եթէ նորելի լինէր ինձ ամենաառողջ մարդուս մահամերձ հիւանդ անուանել, կարծում եմ որ մի այդքան օրինաւոր և հաստատված իրականութեան անտեղեակ ձևանալը նորելի չէր: Բայց միթէ կարծում էք որ նա այդ չը գիտէր. կամ մարդիկ, որոնք միմիայն չարամիտ զուարճութեան համար պատրաստ են ամեն բան անելու, միայն թէ աջողվէր իրանց ծիծաղել իրանց հակառակորդի հրապարակական խայտառակվելու վրա:

Պարոններ, լրագրութիւնը մի դարձնէք ձեր կրքերի ասպարէզը: Եթէ դուք կարծում էք որ դրանով մէկին հասարակութեան առաջ ամաչելու ստիպած կը լինէք, սխալվում էք. ձեր բաւականութիւնը դժբաղդաբար միայն մի քանի օր կարող էք վայելել. ճշմարտութիւնը միշտ ճշմարտութիւն կը մնայ. խղճմտանքը մաքուր մարդու ճակատը միշտ բաց է հասարակութեան առաջ: Հեռու, անբարեխիղճ մարդիկ, խնայեցէք գոնէ այն լրագիրը, որը այսօր մեր մէջ միակ օրինաւոր օրգանն է, ինչու առիթ տալ անօգուտ բանակռիւների, երբ առանց այն էլ աւելի հարկաւոր նիւթեր կան «Մշակի» համար: Ինչ օգուտ ստելուց. ինչ օգուտ զրպարտելուց. ախար չէ որ զրպարտվածը կը պաշտպանվի. և արդարութիւնը պաշտպանող լրագիրը այդ իրաւունքը չէ կարող մերժել նրան, և նա անկասկած իրաւունք կը տայ նրան ձեր երեսին ասելու. «ստում էք պարոն, և այն էլ ոչ անգիտակցաբար, սխալմամբ, որ ամեն մի բարեմիտ մարդ ձեզ կը նզիր. ոչ, այլ գիտութեամբ, հաշուով, կրքից կուրացած: Այդ ես հաստատ գիտեմ, որովհետև ճանաչում եմ այն պղտոր աղբիւրը, որտեղից այդ լուրը բղխած է, և ցաւում եմ ասելու, պ. լրատու, դուք ոչ առաջինն էք և ոչ էլ վերջինը հայ խմբագիրների ձեզ վրա ունեցած հաւատը ի չարը գործ դնողներից. բայց ամօթ է, ամօթ:

Սարգիս Յովհաննիսեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՈՂԲ գիւղից մեզ գրում են. «Տեղիս ուսումնարանի ուսուցիչները և մի քանի երիտասարդներ՝ պատրաստվում են առաջիկայ Վարդանանց տօնին ներկայացում տալ յօգուտ ուսումնարանի: Կը ներկայացնեն «Վարդանանց պատերազմ» ողբերգութիւնը և «Խէչօի թուզ» վոդեվիլը: Մենք պարտական ենք գլխաւորապէս աւագ-ուսուցիչ Կ. Քոչարեանցի եռանդուն աշխատութեանը, որ կողքում, ահա երրորդ անգամն է, թատրական ներկայացում է կայանում»:

—

Մեզ տեղեկացնում են ԷՋՄԻԱԾՆԻՑ, որ վեհափառ Կաթողիկոսի առողջութիւնն այժմ այնքան լաւ է, որ կարծէք թէ բոլորովին հիւանդացած չէ եղել:

—

«Моск. Вѣд.» լրագիրը Կովկասի հայերի մասին իր սրամիտ յօդուածները լոյս աշխարհ բերելուց յետոյ, այժմ իր թէհրանի թղթակցի բերանով սկսել է զանազան նաղլեր պատմել և Պարսկաստանի հայերի մասին: Լրագրի սևիկան թղթակիցը հրաւիրում է պարսից կառավարութիւնը զգոյշ լինել և հսկել:

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Ճեմարանի տեսչ Նահապետեան վարդապետը հրաժարական

տուեց իր պաշտօնից: Ժամանակաւոր վերատեսուչ նշանակված է Սարգիս եպիսկոպոսը»:

—

«Тифл. Лист.» լրագրում կարդում ենք. «Մեր քաղաքում յիշել էինք մի հիւանդի մասին Ա. ազգանունով, որին քաղաքային հիւանդանոցում դրսում արեցին, բայց այդ բժշկութիւնը նրան ոչինչ օգուտ չը բերեց: Այժմ բժշկապետ Գասպարեանց խնդրում է մեզ յայտնել, որ Ա. ազգանունով հիւանդը (որը երևի Արութիւնով հիւանդն է), Կօխի լիմֆայով հիւանդանոցում բժշկվելուց յետոյ, աւելի էլ հիւանդացաւ, քան թէ սրսկումներից առաջ: Փետրվարի 2-ից այդ հիւանդը բուժվում է բժշկապետ Գասպարեանի մօտ և մինչ այժմ, ինչպէս վկայում է բժշկապետը, իրան չէ աջողվում վերականգնեցնել հիւանդի առողջութեան գոնէ այն դրութիւնը, որի մէջ նա գտնվում էր Կօխի լիմֆայով բժշկվելուց առաջ:» Մենք այդ լուրին թոյլ կը տանք մեզ մի կարևոր նկատողութիւն անել. ցանկալի կը լինէր, որ այն անձանց անունները ու ազգանունները, որոնք քաղաքային հիւանդանոցում ենթարկվում են Կօխի լիմֆայով բժշկութեանը և որոնք դուրս են գալիս հիւանդանոցից՝ հրատարակվէին ամբողջապէս և ոչ թէ միմիայն սկզբնական տառերով: Դա մեր կարծիքով անհրաժեշտ է:

—

ՋԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են. «Կարծես մենք ոչ թէ 19-դ դարումն ենք ապրում, այլ միջին դարերում. այս օրերս պսակեցին այստեղ մի 14 տարեկան օրիորդին մի 50 տարեկան մարդու հետ: Ասում են, որ աղջկայ ծնողները բացի տըգէտ լինելուց, աղքատ էլ են... Բայց մթթէ այդ հանգամանքը կարող է արդարացնել այն, որ նրանք մի երեխայ կնութեան տուեցին մի ծերունուն:»

—

Փետրվարի 13-ին վախճանվեց ԹԻՖԼԻՍՈՒՄ պրելատ Մակսիմիլիան Օրլովսկին, ազգով լեհացի, կովկասեան և անդրկովկասեան կաթոլիկ եկեղեցիների գործակալ և Թիֆլիսի Կուկիա թաղի կաթոլիկ եկեղեցու քահանայ: Հանգուցեալը Սարատովի կաթոլիկ եպիսկոպոսի ներկայացուցիչն էր մեր երկրում: Անցեալ տարի Օրլովսկին ոծնեց իր քահանայական պաշտօնում ծառայութեան 50-ամեակը: Հանգուցեալը ամենից յարգված և սիրված էր իր բարի բնաւորութեան և համբերող ոգու համար: Նա վախճանվեց 75 տարեկան հասակում: Հանգուցեալի թաղումը տեղի կունենայ վաղը. կը բերվի Կուկիայի եկեղեցուց և կը թաղվի Սօլօլակի կաթոլիկաց հին գերեզմանատանը:

—

Փետրվարի 14-ին հայոց դերասանական խումբը ներկայացրեց Շիլլերի «Աւազակներ» դրաման: Կարլոսի դերը կատարեց պ. Պետրոսեան: Թատրոնում հաւաքված բաւականաչափ հասարակութիւնը, ինչպէս երևաց, դժգոհ չը մնաց ներկայացումից, մինչև իսկ բաւական ոգեորված ծափահարութիւններ էլ եղան: Պ. Պետրոսեան Կարլոսի դերը թէև հաւասարաչափ աջողութեամբ չը տարաւ, բայց վերջին գործողութիւններում, և այդ գործողութիւնների մի քանի տեսարաններում նրա խաղը այնքան ազդու էր, որ լաւ տպաւորութիւն թողեց: Պ. Աւալեան և կոմս Մոորի դերակատարը, պ. Ցարութիւնեան, լաւ տարան իրանց դերերը: Այս անդամվայ ներկայացման մասնակցում էին մի խումբ անծանօթ երիտասարդներ, որոնք, ինչպէս երևում է, նոր են բեմ դուրս գալիս: Երևում է դրանք սէր ունեն խաղալու. լաւ կը լինէր եթէ աւելի փորձված դերասանները առանձին խնամք և ուշք դարձնէին դրանց վրա, ուղղէին նրաց սխալները, սովորեցնէին,—և այդպիսով գուցէ դրանցից շատերը կը դառնան աւել կամ պակաս լաւ դերակատարներ խմբի համար: Ուսանել, սիրել արհեստը, և միշտ աշխատել ուղղել իրան և կատարելագործվել,—ահա թէ ինչ է պակասում բոլոր մեր դերասաններին, որոնց մէջ շատերը կան, որ եթէ այդ ցանկութիւնն ունենային, այժմ գուցէ շնորհալի խաղացողներ լինէին:

—

Փետրվարի 14-ին, Ներսիսեան դպրոցը հանդէս կատարեց ի յիշատակ Ներսէս հինգերորդի մահվան դարեդարձի: Հանդիսին հաւաքված բազմութիւնը իրաւունք ունէր շատ գոհ լինելու դպրոցի աշակերտական խմբի վատ երգեցողութիւնից, և գոհ էլ մնաց: Երգը սկսելու համար ծիծաղելի փորձեր էին անում, և երգած մի քանի երգերն էլ ապացուցեցին, որ երգեցողութիւնը դպրոցում առանձին ուշադրութիւն չէ դրաւել: Հեշտ բան չէ օրինաւոր երգեցիկ խումբ պահելը:

—

Այս օրերս հայազգի մի բժիշկ, դոկտոր Ասլանեան, որը իր ուսումն աւարտել է Լօնդոնում, և մի քանի տարի բժշկութիւն է արել Էրզրումում, Թիֆլիսի վրայով ուղևորվեց Թաւրիզ, ուր պարոնը պէտք է բժշկութեամբ պարապի:

—

Վերջապէս,—ահա ինչ կարող է բացականչել իւրաքանչիւր հայ, լսելով, որ Ներսիսեան դպրոցի համար նոր շինութիւն է կառուցվում: Ահա փաստը: Դպրոցի հոգաբարձութիւնը վճռել է Վանքի մօտ գտնվող դպրոցական հողի վրա շինել նոր շինութիւն դպրոցի համար: Նախահաշիվով ծախս որոշված է 120 հազար ռուբլի: Յատակագիծն արդէն կազմվում է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՕՎԻՆԻՍՏԱԿԱՆ ՅՈՅՑԵՐ

Ֆրանսիան ունի թշնամութիւն Գերմանիայի դէմ: Այդ բոլորը գիտեն: Այդ թշնամութեան պատճառը մի մեծ պատճառ է: Այդ գիտեն և Ֆրանսիացիք և գերմանացիք:

Ֆրանսիան միշտ պատրաստվում է իր վրէժն առնել: Այդ երբէք չէ մոռանում Գերմանիան:

Գերմանիան աշխատում է զինաթափ անել իր պատմական թշնամուն: Ֆրանսիացիք կոյր չեն և այդ տեսնում են:

Թէ ինչ ձևով և երբ տեղի կունենայ երկու մեծ ազգերի մէջ վրէժխնդրութեան այդ հսկայական և մի և նոյն ժամանակ սոսկալի հաշիւը,—այդ դուշակել չէ կարելի:

Ցանկալի է, ի հարկէ, և շատ ցանկալի, որ Ֆրանս-գերմանական ազգային հաշիւները մի այլ ճանապարհով տեսնվէին, և այդ ճանապարհը չը տաներ դէպի պատերազմի դաշտը, ուր երկու մեծ ազգերը, ռազմագիտական կատարելագործված արհեստի շնորհով, պէտք է ապշեցնեն ամբողջ աշխարհն անթիւ մարդկանց արիւնը թափելով, և Բէյնի գեղեցիկ հովտում արեան գետեր առաջ բերելով:

Եւ որքան այդ բանը ցանկալի է՝ թէ այդ երկու ազգերի և թէ ամբողջ Եւրոպայի շահերի տեսակէտից, այնքան էլ տգեղ և նոյն իսկ զզուելի են այն մանր մունր բծախնդրութիւնները և արհեստական, շովինիստութեան հացրած, իբրև թէ ազգասիրական ցոյցերը, որ անում են երբեմն Պարիզում, և երբեմն Բերլինում՝ զրգռելով երկու երկիրների մէջ էլ զիւրագրգիռ տարրերը, որ ուրիշ խօսքով կը նշանակէ լուր ածել կրակի վրա:

Շովինիստական այդ ուղղութիւնը շատ անգամ այնքան առաջ է գնում, որ նոյն իսկ գիտութեան և գեղարուեստի ասպարիզումն էլ երևան է գալիս, թէև այդ երկու ասպարէզները միշտ մաքուր պիտի մնային այդ արեան բծերից և ատելութեան կայծից, որ իրանց ետևից ամեն տեղ քաշ են տալիս դիպլոմատները:

Սրանից դեռ մի տարի առաջ Գերմանիան մի անհասկանալի և արհեստական թշնամութեամբ վերաբերվեց դէպի Պարիզի մեծ ցուցահանդէսը, դէպի համաշխարհային կուլտուրայի այդ մեծ արտայայտութիւնը:

Եւ այդ միայն այն պատճառով, որ ցուցահանդէսը Պարիզում եղաւ:

Դեռ սրանից մի քանի օր առաջ ամբողջ աշխարհը ոգեորված էր Կօխի գիւտով (թէև այդ գիւտն այժմ հիասթափման շրջանի մէջ է). ամենքը խոնարհվում էին այդ մեծ յաղթանակի առաջ. և այդ հանդիսաւոր բօպէներին Պարիզում գտնվեցան բազմաթիւ մարդիկ, որոնք այնպէս ձեացան, որ իբրև թէ չեն տեսնում այդ բոլորը, միայն այն պատճառով, որ գիւտ անողը Կօխ՝ գերմանացի էր:

Շուտով Բերլինում պիտի լինի նկարչական ցուցահանդէս: Դրան ուզում են մասնակցել և ֆրանսիացի նկարիչներ: Եւ ահա Պարիզում ցոյցեր են անում այդ բանի դէմ, և չեն ուզում որ ֆրանսիացի նկարիչները մասնակցեն այդ ցուցահանդէսին. և այդ էլ միայն այն պատճառով, որ ցուցահանդէսը Բերլինումն է լինում:

Եւ ուրիշ այդպիսի հարիւրաւոր փաստեր:

Ջենք ուրանում. Գերմանիայի և Ֆրանսիայի ներքին, պատմական թշնամութիւնը միանգամից ոչնչացնել, արմատախիլ անել չէ կարելի. գուցէ մի օր այդ թշնամութիւնն այնպէս պայթի, որ տակն ու վրա անի ամբողջ Եւրոպան: Բայց արհեստական կերպով զրգռել երկու ազգերին միմեանց դէմ, աշխատել լարել նրանց յարաբերութիւնը, ջանք անել չինական պատ քաշել Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ, և քաղաքական թշնամութիւնը մտցնել նոյն իսկ գիտութեան և գեղարուեստի ասպարէզները,—դա կը նշանակէ մանր մունր շովինիստական ձգտումներով վարակվել, դա կը նշանակէ ազգերի խաղաղութիւնը խաղալիք դարձնել, և մեղանչել խաղաղութեան մեծ գաղափարի դէմ. և շատ անզգոյշ վարվել այդ կրակի հետ, որը կարող է բռնկվել և միանգամից ամբողջ ազգեր այրել և մոխիր դարձնել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական «Figaro» լրագիրը լսել է, որ Բիսմարկ իշխանը շուտով տեղափոխվելու է Լօնդոն, որտեղ և դիտաւորութիւն ունի հրատարակել իր յիշատակարանը:

—Ասում են որ գերմանական այրի կայսրուհու Պարիզ գալու պատճառն այն է, որ նա դիտաւորութիւն ունի յորդորել Ֆրանսիացի նշանաւոր նկարիչներին մասնակցել Բերլինում կայանալի պատկերահանդէսին: Ասում են որ Ֆրանսիացի մի քանի յայտնի նկարիչներ խոստացել են արդէն իրանց մասնակցութիւնը: Պարիզի գերմանական դեսպան կոմս Մինստեր յայտնեց գերմանական կայսրի անունից, որ Ֆրանսիացիք փառաւոր ընդունելութիւն կը գտնեն Բերլինում:

—Նորից հետաքրքրական լուրեր. ասում են, որ Վիլհելմ կայսրը մտադիր է տեսնվել Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնոյի հետ:

—Բերլինից գրում են, որ այն օրից, երբ Բիսմարկ հեռացաւ կանցլերի պաշտօնից, Ֆրանսիական հասարակաց կարծիքը սկսել է բաւական բարեկամական կերպով տրամադրվել դէպի Գերմանիան:

—Բոլգարական ազգային ժողովը այս օրերս որոշեց մի միլիոն ֆրանկ յատկացնել Մակեդոնիայում դպրոցներ բանալու համար:

—Աւստրիական երցհերցոգ Ֆրանց-Ֆերդինանդ, վերադարձած լինելով Պեշտ, յայտնում է իր հիացումը Ռուսաստանի մասին:

—Ճշմարտութիւնից զուրկ են յայտնվում այն լուրերը, իբր թէ գերմանական կայսրը հիւանդ է և իբր թէ խնամակալութիւն պիտի հաստատվէր Գերմանիայում, պետական գործերը կառավարելու համար:

—«Freisinnige Zeitung» լրագիրն ասում է, որ Վիկտորիա այրի կայսրուհին ամենալաւ միջնորդ կարող է լինել Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ բարեկամութիւն հաստատելու համար:

—Ռուս կօղակ Աշինով այժմ Պարիզումն է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պրոֆէսոր Կօխ իր լիմֆային տուել է պաշտօնական անուն, այն է տուբերկուլին:

* * *

Գերմանիայում սկսել է երևան գալ մի տեսակ կասկած դէպի Կօխի տուբերկուլինը: Կայսրը, կանցլերը և բէյխստագը ստանում են բազմաթիւ խնդրագրեր, որոնցով խնդրում են պաշտօնապէս արգելել այդ լիմֆայի գործածութիւնը:

* * *

Նորերս Սան-Ֆրանցիսկօյում վախճանվեց Հավայի թագաւորը՝ Կալակաուա. այդտեղ գնալով, թաղմանի ժամանակ նա տանուլ տուեց իր ամբողջ հարստութիւնը: Էլի մի քանի ժամ, և թագաւորական գանձարանի ամբողջ հարստութիւնը կանցներ ծովային օֆիցերների ձեռքը, որոնց հետ նա խաղում էր: Սան-Ֆրանցիսկո գալով, թագաւորը ստիպված էր անմիջապէս պարտք առնել:

* * *

Լօնդոնում այժմ կան 211 հասարակական ձրի դրադարաններ: Այդ բոլոր դրադարանները բացված են քառասուն տարվայ ընթացքում: Այս օրերս Լօնդոնի մի թաղում մի նոր ձրի դրադարան բացվելիս ներկայ էր Գլադստոն, որը բացման ժամանակ մի ճառ խօսեց և մի քանի տեղեկութիւններ հաղորդեց Լօնդոնի ձրի դրադարանների այժմեան դրութեան մասին:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Զինուորական վարչութեան տուած հրամանով յայտարարված է, որ զինուորներին անդամման արգելվում է փողոցներում ծխել, իսկ օֆիցերներն էլ պարտաւոր են կատարելապէս ենթարկվել պոլիցիայի կարգադրութիւններին այն մասին, թէ որտեղ չէ կարելի ծխել:—Երէկ, Միքայէլեան պալատում, աշխարհագրական ընկերութեան հանդիսաւոր նիստում, ֆրանսիացի ճանապարհորդ Բօնվալօ մի զեկուցում կարդաց, Տիբեթում 1889 և 1890 թուականներին արած իր ճանապարհորդութեան մասին, պրինց Հենրիխ Օրլէանի հետ: Բօնվալօ, ի միջի այլոց մատնանիշ արեց ռուս ճանապարհորդների մեծ ծառայութիւնների վրա, որոնք բացել են Միջին Ասիան քաղաքակիրթ աշխարհի համար, ապացուցանում էր, որ Լօբ-Նորից ռուսները կարող են, առանց մեծ դժուարութիւնների, մտնել Խլասա և այդպիսով ուղիղ յարաբերութիւն հաստատել ֆրանսիական կալուածների հետ, մի կողմ թողնելով չինական և անգլիական կալուածները: Տիբեթի իշխանները ենթարկվում են ռուս ազդեցութեան, որովհետև շատ յարգում են ռուսաց թագաւորին: Նիստին ներկայ էին՝ Մեծ իշխանուհի Եկատերինա Միխայէլովնա, բարձրագոյն հիւրեր, պրինց Հենրիխ Օրլէանեան և աշխարհագրական ընկերութեան շատ անդամներ:—Երէկ մինիստրական մասնաժողովը քննում էր Սիբիրի երկաթուղու գծի հարցը:—Լրագիրները հաղորդում են, որ բժշկական դեպարտամենտը տեղեկացրեց սանիտարական-պոլիցիական վերահսկիչ պաշտօնեաներին, որ ապրիլի 1-ից գործադրութեան մէջ են մտցնվում պարտաւորեցուցիչ սանիտարական կանոններ գործարանական և արդիւնաբերական հիմնարկութիւնների համար:

ՀՌՕՄ, 13 փետրվարի: Մասսաուայից դէպի հարաւ, իտալական-աբիսինեան սահմանի մօտ, իտալական զօրքերը 600 հոգուց բաղկացած տեղացիների յարձակմունքին առաջն առան, որի ժամանակ տեղացիներից սպանվեցին 203 հոգի, որոնց թվում և տեղացիների առաջնորդը՝ Ասկէաս. իտալացիներից սպանվեցան 2 հոգի և 7 հոգի էլ վիրաւորվեցան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի: 1891 թվին հեծնելու 4—6 տարեկան ձիերի ցուցահանդէս կը լինի՝ Ելիսավետգրադում, ապրիլի 28-ին, Դոնի շրջանի Վելիկօկնեաժսկի ստանիցայում՝ օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 2-ը, Վիլնոյում՝ գիւղատնտեսական ցուցահանդիսի ժամանակ. ապա Կովկասի ձիարշաւների փորձնական 9 տեղերում կը լինեն մի տարեկան ձիերի ցուցահանդէսներ: Պրեմիաներ նշանակված են՝ Ելիսավետգրադում և Վելիկօկնեաժսկի ստանիցայում՝ 1,500-ական ռուբլի, Վիլնոյում՝ 500 ռ. և ոսկէ մեդալ, և բացի դրանից 6 բրոնզեայ մեդալ և 5-ական զովասանական թերթեր, իսկ Կովկասի յիշատակած տեղերի համար՝ 900 ռ., 9 արծաթէ և 9 բրոնզեայ մեդալներ և 9 զովասանական թերթեր:—Երէկ պրինց Հենրիխ Օրլէանեան ուղևորվեց արտասահման:—Լրագիրները լսել են, որ այս օրերս վերջնականապէս վճռված է երկաթուղու գիծ անցկացնել Տաշկէնտից մինչև Սամարկանդ, իսկ «Новое Время» հաղորդում է, հաստատ աղբիւրից, որ մինիստրական մասնաժողովում, համաձայն հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան նախագծին, վճռված է անյապաղ ձեռնարկել մինչև Զելիաբի գիծ անցկացնել և այժմ սկսել կառուցանել Ուսուրի բաժնի գիծը:

ՊԱՐԻԶ, 14 փետրվարի: Դերուլէդ և նրա համախոհները բողոք են բարձրացնում այն բանի դէմ, որ ֆրանսիացի նկարիչները ուզում են մասնակցել Բերլինի պատկերահանդէսին, իսկ բուլանժեականները ցոյց արեցին գերմանական այրի կայսրուհու Պարիզ այցելելու դէմ:

ԲԵՐԼԻՆ, 14 փետրվարի: Լիբէյխի գտած միջոցը տուբերկուլօզի դէմ, որը սրսկվում է կաշուտակ, բաղկացած է կանտարիդային-թթու կալիից:

ԼՕՆԴՕՆ, 14 փետրվարի: Բրազիլիայի նոր հանրապետութեան նախագահ ընտրված է նախկին դիկտատօր Ֆոնսեկա, որը ընտրված է թոյլ մեծամասնութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի: Հրատարակված է մի կարգադրութիւն, որով Ռուսաստանի բոլոր երկաթուղիներով կարելի է հացի բեռներ տեղափոխել որոշված սակագնից 50% պակասով եւրոպական Ռուսաստանի նահանգների ազգաբնակութեան պիտոյքների և վերոյիշեալ նահանգների դաշտերին սերմ մատակարարելու համար: Պակասեցրած տարիֆները կը գործադրվեն այսօրվան թվից մինչև 1891 թվի սեպտեմբերի 1-ը:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՆՁՆՎԱԾ Է ՄԱՄՈՒԼԻՆ

„ՀԻՆ ՀԱՅՈՑ ՏԱՂԱՁԱՓԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ, ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆ"

Այս գիրքը՝ որ 1889 թուականին առաջարկված էր կ. Պոլսի Իզմիրեան-մրցանակաբաշխութեան յանձնաժողովին ի քննութիւն, այժմ տպագրվում է նորանոր յաւելուածով և ծանօթութեամբ: Գինն է 50 կոպ.:

Գրադարան-ընթերցարանները ստանում են ձրի, եթէ վաղօրոք հաղորդեն իրանց հասցէն ուղարկելով և ճանապարհածախս:

Դիմել. Шуша, Аветису Багатурянцу. 1—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 22 փետրվարի (6 մարտի) դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ TAMISE (ՏԱՄԻԶ) շոգենաւը, նաւապետ CHARVET (ՇԱՐՎԷ) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր, Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգստները:

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ՝ ԳՕԼԴԼՈՒՍ: 1—2

ՄԻ ՄԱՔՈՒՐ ՍԵՆԵԱԿ վարձով է տրվում, Օրբէլիանովսկի փողոցում, տուն № 9, Քարախանովի: 2—2

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ոյժի հաստնելը տարածութեան վրա.

ՏԵԼԵՖՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.

Էլէկտրական նշաններ.

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

Էլէկտրոլիզ,

Ակումուլատորներ, Էլէմենտներ,

ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.

Նախահաշիւներ և ծրագիրներ ձրիաբար.

ԷԼԷԿՏՐՕՆ

ԳԼԽԱՒՈՐ Եղբայրների

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա)

Մեծ Սադովայա փողոց, 24

РОСТОВЪ (на Дону)

БР. ГЛѢБОБЫ

Большая Садовая, 24.

ԴԱՋԱՑԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտաս սիստեմայի, որոնք ի բանք իրանց են ուղղում ու օծվում:

Գազի համար — ածուխից,

— — — նաւթից,

— — — անտրացիտից,

— — — կէրոսինից

1/2-ից մինչև 120 ձիաւ ոյժի:

Շոգեմեքենաներ մեծ արագութեան.

8—100 (և. չ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 30 յունվարի (11 փետրվարի) շոգենաւ ՍԻՐԿԱՍԻ նաւապետ ԲՕՇԵԼ

— 13/25 փետրվարի — ԱՆԱՏՕԼԻԱ — ԳԱՐՐԻԳ

— 27 փետրվարի (11 մարտի) — ՄԻՆԴՐԵԼԻԱ — ԺԻԲՈՒԷՆ

— 13/25 մարտի — ՍԻՐԿԱՍԻ — ԲՕՇԵԼ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ:

Տօմակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Դարանիոնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, Նախկին գներալ Տէր-Աստատուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլգարովին, Կոլիւբիակինսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՈՍԻՑՍԿՈՒՄ պ. Լուի Բընօին: 8—10 (և. և չ.)

Գլխաւոր պահեստը դտնվում է Թիֆլիսում և Բաքուում Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ:

20—50 (չ.)



ՄԻԶՈՑ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՄ

բժշկական դեպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում: 43—52 (Շ.)

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ

ТОВАРИЩЕСТВО

МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовокъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелѣзныхъ дорогъ.

Складъ локомобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клйетонъ и Шутлівортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

46—100 (և. չ.)

Միայն ֆաբրիկային այդ մարկա կրելով, վաւեր է համարվում.

ՄԻ՞ ՀԱԶԻՐ

Մեղրից և խոտերից պատրաստված մայց-էկստրակտ և կոնֆէտներ

Լ. Գ. ՊԵՏՇ ԵՒ ԸՆԿ. ԲՐԷՍԼԱՈՒԻ ՄԷՋ:

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով ապացուցված է, որ այդ պրէպարատները չեն պարունակում առողջութեան համար որ և է վնասակար բաղադրութիւններ, և այդ պատճառով նրանց ներմուծումը Ռուսաստան և նրանց այդտեղ ծախելը թոյլատրված է:

ԳԻՆԸ. մէջը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. կոնֆէտները 30—50 կոպ.:

Գլխաւոր պահեստ Ռուսաստանում

Վ. ԱՈՒՐԻԻԻ մօտ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Կոլոկոլնայա 18/19

Վաճառվում է Ռուսաստանի բոլոր դեղագործարաններում և դեղատներում:

9—16 (ամսի 1 և 15)



Լոյս տեսաւ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

ԽԱԹ—ՍԱԲԱ

(Հայ բոշաների կեանքից)

Գինն է 15 կոպ.

Ծախվում է «Մուրճի» խմբագրատանը և գրավաճառների մօտ: 1—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի:
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՄՈՒԽԱՐԻՆՍԿԱՑԱ—12—12 1/2 ժ., կանանց և ներքին ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12 1/2—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա):
ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.

Վճար—50 կ.: Հաժախորդի (կոնսիլիումի) համար առանձին:
Հերթակալ բժիշկ—երեկ. ժ. 9-ից մինչև առ. ժ. 7-ը:

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

Дозволено цензурою, Тифлисъ 15 Февраля 1891 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. кав.